

"30" հունվարի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2002 թվականի N 79

ԵՐԿԱՐԱՏԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԻՆ  
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՆՄԱՆՕՐԻՆԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Սպառողների իրավունքների պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել երկարատեւ օգտագործման ապրանքների նորոգման ընթացքում սպառողին անհատույց տրամադրման ոչ ենթակա նմանօրինակ ապրանքների անվանացանկը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 30-ից:

Հաստատված է  
ՀՀ կառավարության 2002 թվականի  
հունվարի 30-ի N 79 որոշմամբ

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ԵՐԿԱՐԱՏԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԻՆ  
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՆՄԱՆՕՐԻՆԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Ավտոմեքենաներ եւ մոտոհեծանվային ապրանքներ, կցորդներ ու դրանց համարակիթ ագրեգատներ՝ բացի հաշմանդամների օգտագործման համար նախատեսված ապրանքներից, զբոսանավերից եւ լողամիջոցներից

Կահույք

Կենցաղային էլեկտրական սարքեր, արդուզարդի (տուալետի) եւ բժշկական նպատակներով օգտագործվող առարկաներ (էլեկտրասափրիչ, էլեկտրամազահարդար, էլեկտրաունելի՝ մազերի գանգրացման համար, բժշկական էլեկտրառեֆլեկտոր, էլեկտրաայրիչներ, էլեկտրաբիստեր, էլեկտրաձածկոցաշալ, էլեկտրաձածկոց)

Մթերքների ջերմային մշակման եւ կերակրի պատրաստման էլեկտրակենացաղային սարքեր (կենցաղային վառարաններ "ՀԹՃ", էլեկտրավառարաններ, խոնավաջերմամշակման սարքեր (տոստերներ), էլեկտրատաքացուցիչներ, էլեկտրաթեյնիկներ եւ այլն)

Քաղաքացիական զենք, քաղաքացիական եւ ծառայողական հրազենի հիմնական մասեր

